ԱՐՄԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ
Դիլիջանի թիվ 2 հիմնական դպրոցի փոխտնօրեն,
հայոց լեզվի և գրականության ուսուցիչ,
ՀՏԴ 37.0

ԴԺՎԱՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՎՈՂ ԴԵՌԱՀԱՍԻ ՀԵՏ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բանալի բառեր. դժվար դեռահաս, շեղված վարք, նեգատիվիզմ, աուտոագրեսիա, ճգնաժամային փուլ, Էմպատիկ փոխհարաբերություններ:

Ключевые слова: трудный подросток, девиантное поведение, негативизм, аутоагрессия, стадия кризиса, эмпатические взаимоотношения.

Key words: a hard teenager, a deviant behavior, negativism, auto-aggression, a crisis phase, empathic relationships.

Բոլոր այն վարքաձևերը, որոնք հասարակական տարակարծության պատճառ են դառնում և չեն ընդունվում վերջինիս կողմից, կոչվում են շեղված վարքաձևեր: Շեղված վարքաձևերը բնորոշ են անձի զարգացման ցանկացած փուլում, և չենք կարող առանձնացնել որևէ տարիք, որը կարող է անձին ապահովագրել տարատեսակ շեղումներից: Այժմ, սակայն, ես կանդրադառնամ միայն դեռահասի շեղված վարքաձևերին, դրանց դրսևորման ձևերին, պատճառներին և կանխարգելիչ մեթոդներին: Տարիքային շրջաբաժանման մեջ դեռահասությունը որակվում է որպես ճգնաժամերով հարուստ փուլ, որն ուղեկցվում է ֆիզիոլոգիական, մտային, վարքային և զգացմունքային ոլորտում տեղի ունեցող փոփոխություններով: Այս փուլի բնորոշ առանձնահատկություններից է տրամադրության և ապրումների կտրուկ հերթագայությունը, դյուրաբորբոքվածությունը, հատուկ է հույզերի ու զգացմունքների խառնաշփոթը: Ըստ Մասլոուի «Բնավորության գծերի շեշտադրված տեսակները» հետազոտության վերլուծությունների՝ տղաների մոտ ագրեսիվ վարքային դրսևորումներ արձանագրվում են 12-15տ. հասակում, իսկ աղջիկների մոտ՝ 11-13 տարեկան հասակում:[1]

Դեռահասի մոտ ագրեսիայի արտահայտված ձևերից մեկը՝ նեգատիվիզմն է. այն է՝ վարքի հակառակվող պահվածք, որը սովորաբար ուղղված է հեղինակությունների դեմ /ծնողների, որոշ մեծահասկների, սահմանված նորմերի, մանկավարժների և այլն/: Դեռահասին բնորոշ է նաև

[1] Տե՛ս Маслоу А. Самоактуализация .Психология личности. - М.: МГУ, 1982 с. 81:

աուտոագրեսիան. այն է՝ ագրեսիան ուղղված է դեպի սեփական անձը: Աուտոագրեսիան և նրա մակարդակները կապված են մի շարք սոցիալ-հոգեբանական և անհատական-անձնային առանձնահատկությունների հետ:[2]

Դեռահասի ընդհանուր հոգեսոցիալական և անհատական-անձնային առանձնահատկությունների, սոցիոմշակութային գործոնների բարդ փոխազդեցությունը պայմանավորում է շեղվող վարքի և ապահարմարման տարբեր ձևերի երևան գալով՝ հանցագործություն, թմրամոլություն, հարբեցողություն, մարմնավաճառություն և այլն: Թեև դեռահասությունն ինքնին դժվար տարիք է, և յուրաքանչյուրն անցնում է այդ փուլով, այնուամենայնիվ ոչ բոլորն են բախվում շեղված վարքային դրսևորումներին. դրա համար առանձնացվում են բազմաթիվ դրդապատճառներ: Պատմական զարգացման տարբեր փուլերում դեռահասի վարքի շեղման պատճառները տարբեր են եղել. դրանք պայմանավորված են ժամանակաշրջանով և տարածաշրջանի առանձնահատկություններով: Ժամանակակից ինովացիոն տեխնոլոգիաները լայն հնարավորություն են ստեղծում դեռահասի համար շփման հնարավորություն ունենալու այնպիսի երևույթների հետ, որոնք, օրինակ պատմական մեկ այլ փուլում կարող էին համարվել արգելված գրականություն և որից օգտվելու հնարավորությունը դեռահասը պարզապես չէր կարող ունենալ: Դեռահասի համար ոչ ընկալելի կինոնկարները, պորնոգրաֆիկ տեսահոլովակները և դեպի շեղված վարքաձևի դրսևորման տանող այլ երևույթները մերօրյա անխուսափելի խնդիրներից են, որոնք պահանջում են մանկավարժ-ծնող դաստիարակչական համալիր ծրագրի իրականացում:

Այսպիսով, դժվար դաստիարակվող դեռահաս են համարվում նրանք, ովքեր իրենց վարքային դրսևորումներով հակասում են հասարակության մեջ ընդունված համընդհանուր նորմերին, գիտելիքների ձեռքբերման ճանապարհին առաջացնում են խնդիրները և դրանց հետ կապված ուսման անհաջողություններ, բախվում են շրջապատի հետ փոխհարաբերությունների հաստատման անկարողության՝ առաջացնում կոնֆլիկտային իրավիճակները և սովորաբար այս ամենի հիմքում ընկած է ընտանիքի և դպրոցի անբարենպաստ պայմանները, հոգեֆիզիկական առողջական վիճակի շեղումները, որոնք հաճախ տանում են հոգու

[2] Տե՛ս Ամիրջանյան Յու.Ա., Զրույցներ սկսնակ ուսուցչի հետ:- Եր.: 1983, էջ. 51:

ճգնաժամի, գոյության իմաստի կորստի, բացասական շեղման և հանցագործության՝ որպես շեղվող վարքի ամենասուր ձևի դրսևորման:

Առավել խրթին է մանկավարժական հաստատություններում «դժվար» դեռահասի և նրա միջավայրի /դասընկերներ/ հետ հարաբերակցման աշխատանքների իրականացումը, եթե դրան դեմ է ոչ միայն բուն դեռահասը իր տարիքային առանձնահատկություններով, ինքնահաստատման և դերային շփոթմունքով հանդերձ, այլև դեռահասի կարծրատիպավորված ծնողը, ով պարզապես երեխային համարում է իր սեփականությունը և դժգոհում, խուսանավում է մասնագիտական աջակցությունից: Այս պարագայում դեռահասը ավելի քան վստահ մերժողական վարքաձև է սկսում դրսևորել և ցանկացած միջադեպում, որպես կանոն, մեղավորություն միշտ փնտրում են հակառակ կողմում. նմանատիպ իրավիճակները սրում են դեռահասի շեղված վարքաձևը, նրան «դրդում» առավել հակասոցիալական վարքի դրսևորման: Այս խնդրի հաղթահարումը հնարավոր է ծնողավարման հմտություններ ուսուցանող դասընթացների ակտիվ մասնակցությամբ: [3]

Դեռահասին ուսումնական նյութի մատուցումը չպետք է լինի մանկավարժի միակ գործառույթը, նա պետք է կրթվողին դիտարկի որպես անհատականություն և հարգելով նրա անհատական- -անձնային առանձնահատկությունները՝ ջանքերն ուղղի նրա հոգեկերտվածքի՝ հասարակայնորեն ընդունելի նորմերի յուրացմանը. վերջինս հնարավոր է միայն նրա հետ վստահելի հարաբերություններ կառուցելու և դրական վերաբերմունք դրսևորելու դեպքում: [4]

Այստեղ հատկանշական է խոսել Ռոջերսի «Միջանձնային հարաբերությունների բարելավման» մոտեցումից, որի էությունը կարեկցելու, ապրումակցելու մեջ է, նա նշում է, որ մարդիկ պետք է կարողանան հասկանալ, կարեկցել միմյանց, ընդունեն մյուս մարդկանց բոլոր զգացմունքները, հույզերը, փորձեն նայել կյանքին դիմացինի դիրքերից: Ըստ նրա՝ հաղորդակցումը պետք է բնութագրվի փոխադարձ հարգանքով: Հասարակության կյանքի բարելավման համար, ըստ Ռոջերսի, փոխհարաբերություններն ընտանիքում, կրթական համակարգում, կառավարությունում, հիմնարկներում, արդյունաբերությունում պետք է լինեն ավելի իմաստավորված և մտերիմ: Եթե մարդը փորձ է ձեռք բերում «ես և դու» փոխհարաբերության շնորհիվ, ապա նրան չի սպառնում

[3] Տե՛ս Գազազյան Ա. Մ., Դիդակտիկան և ուսուցիչը: - Եր.: 1967, էջ 92:

[4] Տե՛ս Սամույլենկո Դ.Ֆ., ՈՒսուցչի վարպետությունը, մանկավարժական տակտը և հեղինակությունը:-Եր.: 1967, էջ. 67:

մենակությունը, օտարացումը և նա իր գործունեության մեջ հաջողության է հասնում:[5]

Փորձը ցույց է տալիս, որ դեռահասի հետ մանկավարժի հարաբերվելու ունակությունների սակավությունը հանգում է դեռահասի՝ տվյալ առարկայի նկատմամբ անտարբերության ձևավորմանը, ինչը դրսևորվում է այլևս բացակայություններով, փողոցում հայտնվելով, դրսում ժամանակ վատնելով: Այս ամենը էլ ավելի խորքային և «դժվար բուժելի» է դառնում, երբ սկսում են դեռահասին չհասկանալ ավելի մեծ թվով մանկավարժներ: Կարելի է ասել, որ սա հետզհետե հանգում է դեռահասի կրթական ծրագրից դուր մնալուն: Հարկավոր է աշխատել ոչ միայն շեղված վարքաձև դրսևորող դեռահասի, այլև նրա ծնող/ներ/ի հետ:

Արդի մանկավարժական գրականությունը հորդորում է ծնողներին զբաղվել դեռահասի հոգեկան առանձնահատկություններն ուսումնասիրած գրականության ընթերցանությամբ, հասկանալ երեխայի վարքի վրա միկրոմիջավայրի ազդեցությունը, շրջապատի հետ հաշվի նստել և ձևավորել նրանից օգտվելու, արդյունավետ հաղորդակցվելու ունակություն, մանկավարժի հետ հաճախակի զրուցել դաստիարակչական ներգործության մեթոդների շուրջ և չվարանել խորհուրդ հարցնելուց:[6]

Սխալ մոտեցումներից է ինքնագործունեությամբ զբաղվելը և սեփական օրինակով դեռահասին հասկանալու և դաստիարակելու փորձեր կատարելը, քանի որ ոչ մասնագիտական «ընտանեկան» մեթոդը մեկ դեռահասի զարգացման վրա կարող է դրական, իսկ մյուսի վրա բացասական ազդեցություն ունենալ: Հաճախ նկատվող սխալներից է նաև դեռահասի նկատմամբ պատժիչ սանկցիաների կիրառումը. դա նրան ավելի ագրեսիվ և հակառակվող կդարձնի, կկորչի ծնող-դեռահաս դրական էմոցիանալ, մտերմիկ կապը, վերջինս կսկսի ավելի ու ավելի ստել՝ հնարավորությունը բաց չթողնելով կրկնելու այն, ինչը ծնողին վրդովմունք է պատճառել:[7]

Ըստ մանկավարժական ուսումնասիրությունների՝ շեղվող վարք դրսևորող դեռահասի վարքային դրսևորումները պայմանավորված են հոգեբանամանկավարժական մի շարք գործոններով, հետևաբար, նրանց ցուցաբերվող աջակցությունն արդյունավետ դարձնելու և համալիր

---

[5] Տե՛ս Роджерс К. К науке о личности . История зарубежной психологии. - М.: 1986, с. 87:

[6] Տե՛ս Социальная педагогика. Под редакцией В.А. Никитина.- М.: ВЛАДОС, 2002,с. 42:

[7] Տե՛ս Вебер Г., Системная психотерапия Берта Хеллингера. -М.: Изд-во, 2002, с. 75:

մոտեցում ցուցաբերելու համար, աշխատանքը պետք է տարվի բազմամասնագիտական թիմի կողմից:[8]

Անհրաժեշտ է ստեղծել համակարգ, որն իր մեջ կներառի ընտանիքը, դպրոցը, կրթական հաստատությունները, վարչական մարմինները, պետական և ոչ պետական կենտրոնները, որոնք կողմնորոշված են աշխատելու դեռահասների հետ, հոգալու նրանց մասին, կանխարգելելու և հաղթահարելու նրանց շեղվող վարքային դրսևորումները: Կրթադաստիարակչական գործառույթ իրականացնող յուրաքանչյուր դեռահասի հետ աշխատող մանկավարժ պետք է ցուցաբերի անհատական մոտեցում դեռահասի հետաքրքրությունների, պահանջմունքների շրջանակի ուսումնասիրության, ներքին մեխանիզմների բացահայտման, հոգեկանի շարժիչ ուժի գնահատման ուղղությամբ, հարգի նրա անձնային առանձնահատկությունները՝ զերծ մնալով պիտակավորումից: Մանկավարժական գործունեությունը ճիշտ հենքի վրա կառուցելով՝ նույնիսկ շեղված վարքը կարող է նաև դրական գործառույթ կատարել, ծառայելով հասարակության զարգացմանը, ինչպես օրինակ՝ սոցիալական ստեղծագործությունը՝ իր տարբեր դրսևորումներով:

Ուստի և դեռահասի շեղված վարքի կանխարգելումն ու մեր հասարակության վաղվա պայծառ օրը մեծապես պայմանավորված է մանկավարժի հոգացավ մոտեցումից և մասնագիտական հմուտ մեթոդիկայի կիրառումից:

Օգտագործված գրականության ցանկ

1.Ամիրջանյան Յու.Ա., Զրույցներ սկսնակ ուսուցչի հետ, Եր., 1983:

2.Բալյան Ա.Ա., Մանկավարժական հոգեբանության հարցեր, Եր., 1983:

3.Գազազյան Ա. Մ., Դիդակտիկան և ուսուցիչը, Եր., 1967:

4.Սամույլենկո Դ.Ֆ., ՈՒսուցչի վարպետությունը, մանկավարժական տակտը և հեղինակությունը, Եր., 1967:

5.Вебер Г., Системная психотерапия Берта Хеллингера, М., Изд-во Института Психотерапии, 2002.

6.Маслоу А., Самоактуализация .Психология личности. - М., МГУ, 1982.

7.Роджерс К., К науке о личности. История зарубежной психологии. -М., 1986.

8.Социальная педагогика. Под редакцией В.А. Никитина, М., ВЛАДОС, 2002.

[8] Տե՛ս Բալյան Ա.Ա., Մանկավարժական հոգեբանության հարցեր: - Եր.: 1983, էջ 88:

Ա. Լ. Գրիգորյան

Դժվար դաստիարակվող դեռահասի հետ Մանկավարժական աշխատանքի առանձնահատկությունները

Ամփոփում

Հոդվածում քննարկվում է դեռահասի անձնային առանձնահատկությունների վրա հիմնված մանկավարժական աշխատանքի մոտեցումները:

Աշխատանքը մշակված է ոլորտում առկա մասնագիտական գրականության և պրակտիկ դաշտում առկա մեթոդների համադրությամբ: Բնութագրված են դեռահասի վարքաձևի շեղման հիմնական պատճառները և դրանց կանխարգելման մեթոդները:

Հատկանշական է՝ «դժվար դեռահաս»-ի հետ մանկավարժական աշխատանք իրականացնելիս ստեղծել էմպատիկ և վստահելի փոխհարաբերություններ, որը կհնարավորի ճգնաժամային փուլում գտնվող դեռահասի շեղված վարքի՝ աուտոագրեսիայի և նեգատիվիզմի կանխարգելման նպաստավոր պայմանների ստեղծումը:

А. Л. Григорян

Особенности педагогической работы с трудновоспитуемыми подростками

Резюме

В статье обсуждаются методы педагогической работы ,основанные на личностных особенностях подростка. Статья разработана на основе методической литературы и сопоставлении существующих в данной сфере методов. Охарактеризованы основные причины девиантного поведения подростка и методы его предупреждения. При осуществлении работы с «трудным подростком» характерно создание эмпатических и доверительных взаимоотношений,которые сделают возможным создание благоприятных условий для предупреждения аутоагрессии и негативизма девиантного поведения подростка,находящегося в стадии кризиса.

A.L. Grigoryan

The peculiarities of pedagogical work with a hard teenager

Summary

The article discusses pedagogical work approaches, based on personal characteristics of a teenager. The work has been elaborated in combination of available professional literature and existing methods in practical field. The main

reasons for the deviation of the teenager's behavior and their prevention methods are characterized. It is considerably to create empathic and trustworthy relationships with a hard teenager while implement pedagogical work, that can make possible for the teenager in the crisis phase to create favorable conditions for the prevention of deviant behavior: auto- aggression and negativism.